ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ կենտրոնական բանկի միջև համագործակցության որդեգրած սզբունքների վերաբերյալ

ք. Երևան «13» _հոկտեմբեր_2006թ.

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանի, մի կողմից, և ՀՀ կենտրոնական բանկը, ի դեմս ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանի, մյուս կողմից, հետագա շարադրանքում՝ «Կողմեր», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

ՀՀ-ում մակրոտնտեսական և ֆինանսական կայունության ապահովման, պետական պարտքի իրացվելի շուկայի ձևավորման, բյուջետային գործընթացների կանոնավոր և անխափան իրականացման, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության արդյունավետության և ֆինանսական շուկայում շուկայական մեխանիզմների բնականոն գործունեության ապահովման համար ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը և ՀՀ կենտրոնական բանկը ամրագրում են համագործակցության հետևյալ սկզբունքները.

1. Կողմերը պատասխանատու են մակրոտնտեսական կայունության պահպանման համար և չեն կարող իրենց գործողություններով վտանգել այն:

2. Կողմերի միջև փոխահարաբերությունները չեն կարող խաթարել ֆինանսական շուկայի կարգապահությունը և պետք է առաջնորդվեն շուկայական կանոններով և միջազգային բանկային պրակտիկայում կիրառվող սովորույթներով: Ելնելով շուկայի վրա կողմերի գործառնությունների ազդեցության կարևորությունից, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ կառավարության միջոցները պետք է տեղաբաշխի շուկայական կանոնների պահպանման սկզբունքի ներքո, իսկ ՀՀ կենտրոնական բանկը պետք է մատուցի գնով և որակով շուկային համահունչ ծառայություններ: Կողմերի գործողությունները չեն կարող լինել մասնավոր հատվածի հաշվին և հանգեցնել շուկայական մեխանիզմների ոչ արդյունավետ գործունեության:

3. Կողմերի փոխհարաբերությունների խարիսխը ՀՀ տնտեսության զարգացման միջնաժամկետ ծրագրերն են՝ ի դեմս մասնավորապես՝ ՀՀ ՄԺԾԾ-ի, և ՀՀ տարեկան պետական բյուջեի ու դրամավարկային ծրագրի, իսկ կարճաժամկետ հատվածում՝ ՀՀ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ամսական և շաբաթական ծրագրերն են: Ծրագրերը՝ յուրաքանչյուր դեպքում, յուրաքանչյուր կողմը քննում է թե՛ մակրոտնտեսական, թե՛ ֆինանսական շուկայի (այդ թվում՝ գանձապետարանային

գործառնությունների) տեսանկյունից և ներկայացնում է համապատասխան գնահատականներ:

4. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ կառավարության միջոցները, այդ թվում նաև սեփականաշնորհումից մուտքերը պահում է հայկական դրամով ՀՀ կենտրոնական բանկում: Բյուջեի կատարման ընթացքում փոխարժեքի տատանումներից վնասներ չկրելու նպատակով, ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը պարտավորվում են կնքել ֆորվարդային պայմանագիր՝ արտաքին պարտքի մարման ու ստացման, տոկոսավճարների, դրամաշնորհների, անդամակցության վճարների, դեսպանություններին կատարվող վճարների և սեփականաշնորհման հաշվի բոլոր մուտքերն ու ելքերը տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում ներառված փոխարժեքով իրականացնելու մասին:

5. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից բյուջեի կանխիկ հոսքերի կառավարումը պետք է նպաստի բյուջեի սահուն կատարմանը և սեզոնայնության հարթմանը: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը պետք է ձգտի, իսկ ՀՀ կենտրոնական բանկը պետք է նպաստի գանձապետարանի թղթակցային հաշիվներում նվազագույն մնացորդով աշխատելու ռեժիմի ամրապնդմանը, որի համար պետք է էապես բարելավվի ծախսող գերատեսչությունների ֆինանսական հոսքերի պլանավորումը և մոնիտորինգը:

6. Կողմերը հավաստում են սույն սկզբունքների ներքո մեկ ամսվա ընթացքում վերանայել կողմերի միջև հարաբերությունները կանոնակարգող փաստաթղթերը:

7. Կողմերը պարտավորվում են սույն համաձայնագրի սկզբունքների ներքո վերանայել ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միջև 24.07.2001թ. կնքված թիվ 1 Հաշվի սպասարկման մասին պայմանագիրը:

8. Սույն պայմանագիրը կնքվել է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար	ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
---	---
Վարդան Խաչատրյան	Տիգրան Սարգսյան